ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2020թ. թիվ 766-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 93 ՀՐԱՄԱՆՆ
ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 11.09.2020թ. թիվ 93 հրամանի առաջին կետով չի պահպանվել Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 11.09.2020թ. թիվ 93 հրամանը ճանաչել անվավեր՝ այն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքին հակասելու պատճառաբանությամբ:

2. «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Դավթյանին՝

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վերացնել 11.09.2020թ. թիվ 93 հրամանի հետևանքները և ներկայանել տեղեկատվություն:

3. Մարզպետարանի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

Սույն որոշումը եռօրյա ժամկետում պատվիրված փոստով ծանուցել «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/13/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 13
ք.Վանաձոր